ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2004-2005թթ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Խմբագրակազմ՝ Կարեն Թումանյան
Էդգար Խաչատրյան

Նկարները՝ Արտակ Օհանյան

Ներածություն

Մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ զեկույցները կարևոր միջոցներից են տվյալ երկրում իրավիճակի փոփոխման ճանապարհին: Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստերի հավաքագրումը և դրանց հրապարակումը հնարավորություն է տալիս ցույց տալ իշխանության տարբեր մարմինների գործունեությունը, գնահատել դրանք, վերհանել խնդիրները և դրանց լուծումները՝ որպես այդ կառույցների օրակարգային հարց և պարտավորություն:

Բացի երկրի վերաբերյալ մարդու իրավունքների ընդհանուր զեկույցից, կարևոր նշանակություն կարող են ունենալ նաև առանձին վարչական տարածքներում մարդու իրավունքների վիճակի ուսումնասիրությունը և համապատասխան արդյունքների վերաբերյալ զեկույցի պատրաստումը: Սա ուղիներից մեկն է հասնելու ոչ մայրաքաղաքային շրջաններում իշխանության մարմինների կողմից մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ձևավորմանը: Ըստ էության, իշխանության ցանկացած որոշում, գործողություն նպատակ ունի լուծելու խնդիրներ, որոնք ուղղակիորեն կապված են կոնկրետ մարդու կամ մարդկանց մեծ խմբերի հետ: Եվ իշխանություն-քաղաքացի հարաբերություններում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ նման զեկույցը հանդիսանում է իրավապաշտպանության տեղայնացման կարևոր միջոցներից մեկը:

Գրքույկում ամփոփված է 2004-2005թթ-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացրած գործունեության ամփոփ նկարագրությունը: Ընթերցողը հնարավորություն կունենա պատկերացում կազմելու այն բնագավառների մասին, որոնցում առավել տարածված են մարդու իրավունքների խախտումները: Այս առումով գրքույկը հասցեագրվում է թե՛ հասարակական կազմակերպություններին, թե՛ անհատ քաղաքացիներին և թե՛ պետական մարմիններին: Սա Լոռու մարզում մարդու իրավունքների վերաբերյալ զեկույցի պատրաստման առաջին փորձն է, և ակնկալում ենք բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցությունը ինչպես փաստերի բացահայտման, այնպես էլ իրավիճակի փոփոխմանն ուղղված գործողություններում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2004-2005թթ. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ



2004 թ-ի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել 271 քաղաքացի, որոնցից 48-ի խնդիրն առնչվում էր սեփականության և բնակարանային իրավունքի հարցերին: 25 քաղաքացի դիմել էր աշխատանքային, 22-ը՝ տնտեսական /ձեռնարկատիրական/, 2-ը՝ կրթական, 13-ը՝ արդար դատաքննության, 8-ը՝ ազատության և անձնական անձեռնմխելիության, 97-ը՝ տեղեկատվություն ստանալու, 23-ը՝ սոցիալական իրավունքների հետ կապված խնդիրներով: 33 քաղաքացու դիմել էր ՀՔԱ Վանաձորի գրասենյակ պաշտպանելու խախտված այլ իրավունքներ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից վերականգնվել է 271-ից 113 քաղաքացու խախտված իրավունք:

Տրամադրվել է 99 բանավոր խորհրդատվություն, 152 քաղաքացու իրավունքի պաշտպանության նպատակով կազմվել են գրություններ /դիմում, բողոք, հայցադիմում, հարցում/՝ ուղղված իշխանության տարբեր մարմինների: Դատական պաշտպանություն է ստացել 15 քաղաքացի: 2005թ-ի ընթացքում գրասենյակ է դիմել 356 քաղաքացի:

Խոշտանգումների եւ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեպքերի վերաբերյալ եւ Մարդու անձնական ազատության եւ անձեռնմխելիության իրավունք

2004թ-ի փետրվարի 20-ից Վանաձորի քրեակատարողական ծառայության կալանավորվածներին պահելու վայրում գտնվող Հակոբ Ճարոյանը հացադուլ էր հայտարարել: Հակոբ Ճարոյանի հավաստմամբ՝ ավելի քան 580 օր ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազությունը իր նկատմամբ անհիմն քրեական հետապնդում է իրականացրել, և ավելի քան 385 օր է, ինչ նա գտնվել է անազատության մեջ: Հակոբ Ճարոյանը իր խախտված իրավունքները վերականգնելու համար բազմիցս դիմել է պատկան մարմիններին, սակայն, նրա հավաստմամբ, իր բոլոր գրությունները հայտնվել են Գեղարքունիքի մարզի դատախազությունում, և դրանցից ոչ մեկին ՀՀ օրենսդրությանը համապատասխան ընթացք չեն տրվել:

Նա պահանջում էր ստեղծել հանձնաժողով և ուսումնասիրել իր կողմից բարձրացված հարցերն ու դրանց հիմնավորված պատասխաններ տալ:

2004թ-ի մարտի 23-ին, ժամը 13.30-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները խուզարկել են Շահումյան գյուղի բնակիչ Իսկուհի Ղանաղյանի բնակարանը: Խուզարկության արդյունքում բնակարանում ոչինչ չի հայտնաբերվել, իսկ տան

հետնամասում գտնվող խոզաբնից հայտնաբերվել է թմրանյութ: Քաղաքացու հավաստմամբ՝ խոզաբնի մուտքի դուռը մշտապես բաց է լինում, և ցանկացած մարդ կարող է անարգել մտնել այնտեղ: Խուզարկությունից հետո առանց բացատրությունների ոստիկանները քաշքշելով իրենց հետ տարել են Իսկուհի Ղանաղյանի որդուն՝ Իշխան Աղաջանյանին: Նույն օրը, ժամը 18.00-ին, Իսկուհի Ղանաղյանին կանչել են ոստիկանություն՝ բացատրելու, թե ինչու են նրա որդուն ձերբակալել: Սակայն դա չի արվել, փոխարենը՝ ոստիկանները խոստացել են հաջորդ օրն առավոտյան նրան թույլ տալ մի քանի րոպե զրուցել որդու հետ: Առավոտյան ոստիկանները Իսկուհի Ղանաղյանին հայտնել են, որ նրա որդին արդեն խոստովանել է, որ թմրամիջոցներ է օգտագործում: Եվ եթե Իսկուհի Ղանաղյանը հաջորդ օրը ոստիկաններին 600-700 դոլար տա, ապա նրա որդին մինչև դատը ազատ կարձակվի:

Իշխան Աղաջանյանին հետագայում դատարանը դատապարտել է ազատազրկման:

2004թ-ի հունիսի 1-ին, ժամը 24.00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Լենինգրադյան փողոցի թիվ 5/4-1-12ա տնակի բնակիչ Արմեն Թամարյանը, վիճելով կնոջ և նրա քրոջ՝ Նազիկ Խաչատրյանի հետ, հարվածել է վերջինիս դեմքին և նրան հասցրել միջին աստիճանի վնասվածք:

Հունիսի 2-ին, ժամը 10.00-ի սահմաններում, Վանաձորի ոստիկանության Բազումի բաժանմունքի ոստիկանները Արմեն Թամարյանին բերման են ենթարկում: Մինչև մեղադրանք առաջադրելը Արմեն Թամարյանին ենթարկում են վարչական պատասխանատվության՝ նշանակելով վարչական կալանք: Բայց վարչական կալանքի ենթարկելու դատավարությանը նրան ընդհանրապես մասնակից չեն դարձնում: Ձերբակալման որոշումը Արմեն Թամարյանին ներկայացվել է 2004թ-ի հունիսի 6-ին: Հունիսի 8-ին նրա պահանջով առերեսում է կազմակերպվում, որի ժամանակ դատախազության քննիչը, Արմեն Թամարյանի հավաստմամբ, հոգեբանական ճնշում է գործադրել մեղադրյալի և տուժող Նազիկ Խաչատրյանի նկատմամբ և ստիպել վերջինիս ստորագրելու կեղծ ցուցմունքի տակ: Կնոջ՝ Նաիրա Խաչատրյանի հետ առերեսման ժամանակ պարզվել է, որ ոստիկանության աշխատակիցները, հաշվի չառնելով նրա հղի վիճակը, հոգեբանական ճնշումների տակ ստիպել են ցուցմունք տալ իր ամուսնու՝ Արմեն Թամարյանի նկատմամբ՝ սպառնալով դատապարտել նրան: Հետո նրանց տուն են այցելել թաղային տեսուչն ու քրեական օպերը և կրկին հայտարարել, որ եթե Նազիկ Խաչատրյանը ամուսնու նկատմամբ ցուցմունք չտա, նրան կվտարեն քաղաքից:

2004թ-ի հուլիսի 19-ին, երեկոյան ժամը 21.00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Սուխումի 2-1 շենքի տարածքի տնակի բնակիչ Արթուր Խառատյանին Վանաձոր քաղաքի ոստիկանության աշխատակիցները տարել են ոստիկանության բաժանմունք և պահել մինչև գիշերվա ժամը 1-ը: Երկու օր անց Արթուր Խառատյանին մեղադրանք է առաջադրվել թմրամիջոցներ շրջանառության մեջ դնելու և իրացնելու համար: Ըստ բժշկական փաստաթղթերի՝ Արթուր Խառատյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ: Նա տարկետման իրավունքով ազատվել է պարտադիր զինծառայությունից:

Նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նշանակվել է փորձաքննություն, փորձագետի եզրակացության համաձայն Արթուր Խառատյանը ճանաչվել է մեղսունակ, սակայն միևնույն ժամանակ նշվել է, որ Արթուր Խառատյանի մոտ առկա են հոգեկան հիվանդության երևույթներ:

Դատարանը Արթուր Խառատյանին մեղավոր է ճանաչել թմրամիջոցներ շրջանառության մեջ դնելու և իրացնելու մեջ և դատապարտել ազատազրկման: Պատիժը կրելու համար Արթուր Խառատյանին ուղարկել են ընդհանուր քրեակատարողական հիմնարկություն:

2004թ-ի հուլիսի 16-ին Դարպաս գյուղի բնակիչ Ժանանա Հարությունյանը իր երկու հարևանների հետ կենցաղա-

Նկարը՝ Ա. Օհանյանի

յին բնույթի վեճ է ունեցել և որոշել է դիմել ոստիկանության բաժանմունք: 2004թ հուլիսի 16-ին, ժամը 22.30-ի սահմաններում, ոստիկանության աշխատակիցները այցելել են Ժաննա Հարությունյանի հարևաններին, մեկ ժամ անց՝ Ժաննա Հարությունյանին: Նրանից բանավոր բացատրություն վերցնելու ընթացքում ոստիկանության աշխատակիցները սկսել են վիրավորել նրան ու նրա մորը: Այնուհետև ոստիկանության աշխատակիցները Ժաննա Հարությունյանին խփելով ու հրելով՝ խցկել են իրենց մեքենան ու տարել ոստիկանություն: Հասնելով ոստիկանություն՝ Ժաննա Հարությունյանին խփելով ու հրելով գցել են մի տնակ, որտեղ չեն եղել կոմունալ հարմարություններ, նույնիսկ՝ տեղ: Նրան այնտեղ պահել են մոտ կես ժամ: Այնուհետև Ժաննա Հարությունյանին բերել են տուն՝ ճանապարհին հայհոյելով ու բազմաբնույթ սպառնալիքներ հասցնելով: Տան բակում իջեցնելով՝ ոստիկանները սկսել են գումար պահանջել՝ սպառնալով, որ եթե չտան, ապա նորից նրան կտանեն: Ճարահատյալ քաղաքացու մայրը 3000 դրամ է տվել՝ վախենալով ոստիկանների սպառնալիքներից:

2004թ-ի օգոստոսի 3-ին Վանաձոր քաղաքում սպանվեցին Էդիկ Մարտիրոսյանը, նրա որդին և ընկերը: ՀՀ Գլխավոր դատախազության կողմից հարուցվեց քրեական գործ, որի նախաքննության ընթացքում ձերբակալվեցին բազմաթիվ մարդիկ:

2004թ-ի օգոստոս 3-ին, երեկոյան ժամը 22:00-ի սահմաններում, Նվեր Պողոսյանին ոստիկանության աշխատակիցները ձերբակալել են և առանց որևէ բացատրությունների իրենց հետ տարել: Նրան ձերբակալելուց հետո նրա ընտանիքի անդամները բազմիցս ցանկացել են իմանալ, թե որտեղ է պահվում Նվեր Պողոսյանը և ինչի համար է մեղադրվում: Նրա հարազատներից թաքցրել են նրա գտնվելու վայրը: Նվեր Պողոսյանի հարազատները նրա գտնվելու մասին իմացել են միայն սեպտեմբերի 8-ին: Նրանց հայտնել են, որ Նվեր Պողոսյանը գտնվում է Վանաձորի քննչական մեկուսարանում: Սակայն շուրջ մեկ ամիս Նվեր Պողոսյանի հարազատները տեղեկություն չեն ունեցել, թե որն է իրենց հարազատի մեղքը և նա ինչու է պահվում մեկուսարանում: Մեկ ամիս հետո «Ազատություն ռադիոկայանի» հաղորդման միջոցով նրանք իմացել են, որ Նվեր Պողոսյանը Էդիկ Մարտիրոսյանի և մյուսների սպանության գործով համարվում է կասկածյալ:

2004թ-ի օգոստոս 3-ին նույն մեթոդներով է ձերբակալվել նաև Լոռու մարզի Թումանյան քաղաքի բնակիչ Արմեն Ռաշիդի Թումանյանը: Ոստիկանության աշխատակիցները Արմեն Թումանյանին ձերբակալել են, սակայն շուրջ երեք օր հրաժարվել են այդ մասին տեղյակ պահել նրա հարազատներին: Ի պատասխան նրա մոր հարցադրման՝ թե որտեղ է իր տղան, ոստիկանության աշխատակիցները պատասխանել են՝ «գնա, տղայիդ որտեղ ուզում ես գտիր»: Երեք օր անց Արմեն Թումանյանի

մայրը իմացել է, որ տղային մեղադրում են սպանության մեջ:

2004թ-ի օգոստոս 3-ին նույն սպանության գործով ձերբակալվել է նաև Վանաձոր քաղաքի բնակիչ Արմեն Կախյանը: Նրա կինը հայտնել է, որ 2004թ. օգոստոսի 3-ին, ժամը 18-ի սահմաններում, իրենց տուն են եկել անծանոթ մարդիկ և ներկայանալով որպես ոստիկանության աշխատակիցներ՝ հայտարարել, թե պատրաստվում են մնալ այդտեղ: Նրանց հետ զրուցելու ժամանակ կինը պարզել է, որ օգոստոսի 3-ին տեղի է ունեցել սպանություն և իր ամուսնուն՝ Արմեն Կախյանին այդ պատճառով տարել են Վանաձորի ոստիկանության բաժանմունք:

Հինգ օր ոստիկանության աշխատակիցները մնացել են Արմեն Կախյանի բնակարանում: Այդտեղ է բնակվում նաև Արմեն Կախյանի երիտասարդ կինը, որին որպես ոստիկան ներկայացած անձինք արգելել են հեռանալ բնակարանից: Հետագայում նրանք իրենց արարքը բացատրել են Արմեն Կախյանի ընտանիքի անդամների անվտանգության ապահովմամբ:

Հինգերորդ օրը մի խումբ անհայտ անձինք, առանց ներկայանալու, խուզարկել են նրանց բնակարանը և որևէ բան չեն հայտնաբերել:

2004թ. օգոստոսի 19-ին Արմեն Կախյանին Վանաձորի ոստիկանության բաժանմունքից տեղափոխել են Երևան քաղաք և պահել քննչական մեկուսարանում: Արմեն Կախյանին ազատ են արձակել 2004թ օգոստոսի 25-ին:

2004թ սեպտեմբերի 3-ին Արմեն Կախյանին կրկին ձերբակալել են: Ոստիկանության աշխատակիցները նրա ընտանիքի անդամներին հայտնել են, որ Արմենը մեկ ժամից տանը կլինի: Արմեն Կախյանին ձերբակալող ոստիկաններից երկուսը մնացել են նրա տանը, կնոջը թույլ չեն տվել դուրս գալ տնից, նույնիսկ՝ զանգ ընդունել: Մի քանի օր անց Արմեն Կախյանի բնակարանը կրկին խուզարկել են և տարել նրա բջջային հեռախոսը, մի քանի լուսանկար և հեռախոսահամարներ:

2004թ. սեպտեմբերի 7-ին ոստիկանության աշխատակիցները բերման են ենթարկել նաև Արմեն Կախյանի կնոջ հորը՝ Սարգիս Գրիգորյանին: Նրա բնակարանը խուզարկել են մինչ բերման ենթարկելը: Հետագայում Արմեն Կախյանին, ինչպես նաև նրա աներոջը ազատ են արձակել:

2005թ-ի մայիսի 25-ին, առավոտյան ժամը 8.30-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Թումանյան 9բ .26 հասցեի բնակիչ Զարիկ Սարդարյանի բնակարան են ներխուժել ոստիկանության երեք աշխատակիցներ և առանց որևէ փոաստաթուղթ ներկայացնելու սկսել խուզարկել բնակարանը: Այնուհետև ձերբակալել են նրա որդուն՝ Արտյոմ Սարդարյանին՝ ասելով, որ նա մեղադրվում է հանցագործություն կատարելու համար: Մեկ օր պահելով Վանաձորի ոստիկանության բաժանմունքում՝ Արտյոմ Սարդարյանին տեղափոխել են ոստիկանության Վանաձորի քաղաքային բաժին: Այնտեղ նա պահվել է երեք օր, որից հետո նրան մեղադրանք է առաջադրվել խարդախություն կատարելու համար (քր. օր-ի 178 հոդվածի 1-ին մաս): Ոստիկանության Վանաձորի բաժնում պահվելու ընթացքում ոստիկանները Արտյոմին ծեծի ու խոշտանգումների են ենթարկել՝ ծանր վնաս հասցնելով նրա առողջությանը: Բռնությունների արդյունքում վնասվել են նրա երիկամները, և, մոր խոսքերով, նույնիսկ ցավազրկող հաբերը չեն մեղմում նրա ցավերը:

Միեր Սիմոնյանը /անունը փոխված է / 2005թ-ի մայիսին զորակոչվել է բանակ: Զինվորական ծառայությունից առաջ նա առողջական որևէ խնդիր չի ունեցել: Մայիսի 10-ին նրան տարել են Մատաղիսի 33651 զորամաս: Երդման արարողության օրը՝ հունիսի 25-ին, առաջին անգամ պարզվել է, որ տղան հինգ օր հիվանդանոցում է եղել, իսկ տղայի մարմինն ամբողջությամբ պատված է եղել կապտուկներով: Մորաքրոջ խոսքերով՝ տղան վախեցած էր և անճանաչելի նիհարած: Հետագայում պարզվել է, որ Միերը նիհարել է 38 կգ-ով: Բժիշկը Միերի, ինչպես նաև 5-7 այլ զինվորների նիհարելու փաստը բացատրել էր մեկ ամիս հաց չուտելով, ջրծաղիկ հիվանդությամբ վարակվելով: Միերի փորի վերին մասերին վերքեր են եղել՝ իբր փորսող տույժի ենթարկվելու պատճա-

ռով: Բայց մորաքրոջ կարծիքով Միերին ճնշումների են ենթարկել, բռնաբարել: Ըստ նրա հետ ծառայող զինվորների պատմածների՝ Միերը գլխապտույտներ, ուշագնացություններ է ունեցել, հաց չի կերել՝ ամեն ինչից զզվելու պատճառաբանությամբ, կորցրել է գիտակցությունը, օրերով ուշքի չի եկել, կորցրել է հիշողությունը, և այդ ամենն ընկալվել է որպես չծառայելու պատրվակ: Այնուհետև պարզվել է, որ երեք անգամ ինքնասպանության փորձ է արել: Զորամասի իրավաբան Մնացական Ավետիսյանը Միեր Սիմոնյանին ստիպել էր ստորագրել մի փաստաթղթի տակ, որով նա խոստովանել է, թե սեքսուալ կապերի մեջ է մտել զինվորների հետ: Այնինչ Միերը հայերեն գրել չի իմացել, և նրա մորաքրոջ հավաստմամբ, հայերեն «խոստովանական» նամակ չէր կարող գրել: Այդ մասին տղայի մորաքույրը հայտնել է իրավաբանին հենց Միերի ներկայությամբ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչը հանդիսանում է ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների հասարակական դիտորդների խմբի անդամ և խմբի այլ անդամների հետ բազմաթիվ այցելություններ է ունեցել քրեակատարողական հիմնարկներ, որոնց ընթացքում բացահայտվել են հետևյալ փաստերը.

2005թ. դեկտեմբերի 20-ի կեսօրին Խնձորուտի անտառից տունդարձի ճանապարհին ոստիկանության աշխատակիցները մի խումբ երիտասարդների, այդ թվում՝ Վանաձոր քաղաքի բնակիչ անչափահաս Դավիթ Հակոբովին տարել են Գուգարքի ոստիկանության բաժանմունք: Ոստիկանության բաժանմունքի աշխատակիցներից մեկը Հակոբովին թելադրել է ինչ-որ տեքստ: Տղան գրել է այն, այնուհետև ստիպողաբար ստորագրել: Տղայի՝ ոստիկանության բաժանմունքում գտնվելու մասին ծնողներին հայտնել են միայն երեկոյան ժամը 21.00-ի սահմաններում: Ուշ երեկոյան Դավիթ Հակոբովին բաժանմունքից դուրս են թողել՝ ասելով, որ բաժանմունք ներկայանա հաջորդ օրը ժամը 14.00–ին:

Արդար դատաքննության իրավունք

2004թ-ի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը իրականացրել է քաղաքացիների արդար դատաքննության իրավունքի մոնիթորինգ: Բացահայտվել են դատարանների կողմից քաղաքացիների և իրավաբանական անձանց դատավարական և նյութական իրավունքի տարբեր խախտումներ:

ա/ Աշխատանքային վեճերի քննության ընթացքում դատարանները ուշադրություն չէին դարձնում խախտված իրավունքների վերականգնման նպատակով ներկայացվող փաստարկներին և միջնորդություններին: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հատուկ ուշադրություն է դարձրել այն քաղաքացիների արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանը, երբ ՀՀ կառավարության կողմից հանրակրթական դպրոցներում իրականացված օպտիմալացման ծրագրի արդյունքում ազատվել են աշխատանքից և դիմել դատարան՝ աշխատանքում վերականգնվելու նպատակով: Ուսուցիչների կրճատման վերաբերյալ դատական գործերի ընթացքում կիրառվում էր դեռևս խորհրդային աշխատանքային օրենսգիրքը:

Օրինակ, 2004թ սեպտեմբեր ամսին աշխատանքից ազատվելու կապակցությամբ Մարինե Կիրակոսյանը դիմել էր Լոռու մարզի առաջին ատյանի դատարան: Շուրջ երեք ամիս անց, այսինքն՝ 2004թ. դեկտեմբերի 27-ին, Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը քննել է Մարինե Կիրակոսյանի հայցն ընդդեմ Վանաձորի թիվ 25 միջնակարգ դպրոցի և մերժել այն:

Դատարանը, մերժելով հայցը, պատճառաբանել է, թե Մարինե Կիրակոսյանը որակապես չի համապատասխանում իր զբաղեցրած պաշտոնին: Գործի քննությամբ բացահայտվել է հետևյալը. դպրոցի տնօրենը Մարինե Կիրակոսյանին աշխատանքից ազատել է հաստիքների կրճատման կապակցությամբ: Սակայն նրա փոխարեն նույն աշխատանքը կատարելու համար աշխատանքի է ընդունել նոր աշխատողի՝ Հռիփսիմե Աթաբեկյանին: Այսինքն՝ դպրոցում Մարինե Կիրակոսյանի զբաղեցրած հաստիքը չի վերացել: Դատարանը, հաշվի չառնելով այս հանգամանքը, խախտել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 36 հոդվածի 1-ին կետը:

Նույն գործով դատարանը հաշվի չի առել նաև այն, որ դատաքննության ընթացքում նշանակված փորձաքննության եզրակացության համաձայն՝ Մարինե Կիրակոսյանը որակապես համապատասխանում է իր կողմից զբաղեցրած պաշտոնին: Նշենք, որ նա իր խնամքի տակ ունի չորս անչափահաս երեխա:

Այսպիսով, դատարանը խախտել է նաև ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 37 հոդվածի երկրորդ մասով սահմանված դրույթները, որոնք են՝ «Աշխատանքի հավասար արտադրողականության և որակավորման դեպքում աշխատանքում թողնելու նախապատվությունը տրվում է երկու և ավելի խնամարկյալ ունեցող ընտանիքավորներին, որոնց ընտանիքում ինքնուրույն վաստակով այլ աշխատողներ չկան»:

Միայն տվյալ գործով դատարանը խախտել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 36 հոդ. 1-ին կետը, 37 հոդվածի երկրորդ մասը և 239 հոդվածը: Բացի նշվածից, խախտվել է նաև Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը, այսինքն՝ դատարանը չի պահպանել արդար և օբյեկտիվ քննության կանոնները:

Այս գործով Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի թույլ տված խախտումները ապացուցվել են ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից, ինչի հիման վրա էլ Մարինե Կիրակոսյանի հայցը բավարարվել է, և նա վերականգնվել է իր նախկին աշխատանքում, ինչպես նաև հարկադիր պա-



Նկարը՝ Ա. Օհանյանի

ռապուրդի համար գումար ստացել:

Մեկ այլ դեպքում, աշխատանքային վեճ քննելիս, ՀՀ դատական բոլոր ատյանները թույլ են տվել դատավարական և նյութական նորմերի խախտումներ:

2003 թ-ի սեպտեմբերի 1-ին Վանաձորի թիվ 9 միջն. դպրոցի տնօրենը թիվ 144 հրամանով աշխատանքից ազատել է Գոհար Սարդարյանին՝ հաստիքների կրճատման կապակցությամբ:

2003 թ-ի հոկտեմբերի 1-ին Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով այն, որ դպրոցի տնօրենը թիվ 144 հրամանով խախտել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 37 հոդվածի պահանջները՝ իր վճռով վերականգնել է նրան իր նախկին աշխատանքում:

2004 թ-ի հունվարի 1-ին Վանաձորի թիվ 9 միջն. դպրոցի տնօրենը կրկին Գոհար Սարդարյանին նույն հիմքով ազատել է աշխատանքից: Գոհար Սարդարյանը կրկին դիմել է դատարան՝ խնդրելով վերականգնել իրեն նախկին աշխատանքում: Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը, վճիռ կայացնելով, մերժել է նրա հայցը:

Գոհար Սարդարյանը սահմանված կարգով վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը նույնպես մերժել է նրա հայցը: Նա վճռաբեկ բողոք է ներկայացրել ՀՀ քաղաքացիական և տնտեսական գործերով Վճռաբեկ դատարան: Վճռաբեկ դատարանը Վերաքննիչ դատարանի կողմից կայացրած վճիռը թողել է նույնը, իսկ վճռաբեկ բողոքը՝ առանց բավարարման:

ՀՀ դատական բոլոր ատյանները հաշվի չեն առել, որ 2003 թ-ի հոկտեմբերի 1-ին Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի վճռով ապացուցված է համարվել, որ Գոհար Սարդարյանը աշխատանքում մնալու նախապատվության իրավունք ունի: Դատարանները քաղաքացու նկատմամբ թույլ են տվել ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52 հոդվածի 2-րդ կետի խախտում, այն է՝ նախկինում քննված քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

բ/ Դատական գործերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դատարանները թույլ են տալիս նաև դատաքննության ողջամիտ ժամկետների խախտում:

Այսպես, ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 111 հոդվածի առաջին մասի համաձայն՝ գործը պետք է քննվի և վճիռ կայացվի դատարանի կողմից հայցադիմումն ընդունելու օրվանից երկամսյա ժամկետում, իսկ նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ օրենքով կարող է նախատեսվել գործերի քննության և լուծման կրճատ ժամկետներ: Այս դրույթին դատարանները հիմնականում ուշադրություն չեն դարձնում, այսինքն՝ դատարանները թույլ են տալիս Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված խելամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի խախտում:

«ՀՔԱ Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը Վանաձորի քաղաքապետարանից տեղեկատվություն ստանալու հայց էր ներկայացրել Լոռու մարզի առաջին ատյանի դատարան: Դատարան դիմելուց մինչև վճիռ կայացնելը տևել է մեկ տարի երկու ամիս: Դատարանի վճիռը մինչ օրս կատարվել է մասնակիորեն:

2004թ. ապրիլի 30-ին Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը քննել է «ՀՔԱ Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի: Հասարակական կազմակերպությունը

քաղաքապետարանից խնդրել էր տրամադրել 2002-2003թթ. Վանաձորի ավագանու և քաղաքապետի կողմից ընդունված որոշումների պատճենները: Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղ.դատ. օր-ի 130-132, 138 հ.հ., վճռել է՝ «Հելսինկյան քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի բավարարել: Պատասխանողը, այսինքն՝ Վանաձորի քաղաքապետարանը, պարտավորվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակին տրամադրել 2002-2003թթ. Վանաձորի քաղաքապետի և ավագանու որոշումների պատճենները, բացառությամբ նրանց, որոնք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հրապարակման ոչ ենթակա տեղեկատվություն են պարունակում: Տվյալ դեպքում դատարանը միանգամայն օբեկտիվ վճիռ է կայացրել:

Սակայն դատավարական գործողությունները ծավալվեցին լրիվ հակառակ ուղղությամբ:

Դատարանի կայացրած վճռի դեմ պատասխանողի կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում վերաքննիչ բողոք չի ներկայացվել: Լոռու մարզի առաջին ատյանի թիվ 2/6092004թ վճիռը 17.05.04թ-ին մտել է օրինական ուժի մեջ և թիվ 2/609 կատարողական թերթի համաձայն 21.05.2004թ-ին ԴԱՀԿ ծառայության Լոռու մարզային ստորաբաժանման հարկադիր կատարողի կողմից հարուցվել է կատարողական վարույթ:

Վճռի կատարման փուլում պատասխանող կողմը 03.06.2004թ-ին դիմել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Մուշեղ Հարությունյանին՝ իր կողմից կայացված վճիռը պարզաբանելու համար: Վանաձորի քաղաքապետարանը ցանկանում էր պարզել, թե ինչ կարգով պետք է վճարվի ավագանու կողմից սահմանված տեղական տուրքը: Միևնույն ժամանակ, պատասխանող կողմը իր դիմումում չէր կոնկրետացրել, չէր պատճառաբանել և չէր հիմնավորել, թե վճռի որ մասն է ենթակա պարզաբանման:

Դատարանը 10.06.2004թ-ին նույն կազմով քննության է առել պատասխանող կողմի ներկայացրած «վճիռը պարզաբանելու մասին» դիմումը և բավարարելով՝ որոշում կայացրել, ըստ որի «2002-2003թթ. Վանաձորի քաղաքապետի և ավագանու ՀՀ օրենսդրությամբ տրամադրման ենթակա յուրաքանչյուր որոշման համար պետք է վճարվի 1000 դրամ տեղական տուրք»: Այսինքն՝ տվյալ դեպքում դատարանը իր որոշմամբ սահմանափակել է նախկին վճռի կատարումը:

Դատարանը 10.06.2004թ-ի կայացրած որոշմամբ թույլ է տրվել նյութական և դատավարական իրավունքի խախտումներ: Այսպես.

1. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142 հոդվածի համաձայն՝ դատարանը իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձանց դիմումով չի կարող լրացուցիչ վճիռ կայացնել, քանի որ այդ մասին դիմումը կարող է ներկայացվել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

2. Դատարանը իրավունք ունի պարզաբանել վճիռը՝ չփոխելով վճռի բովանդակությունը և էությունը /ՀՀ Քաղ.դատ.օր-ի 143 հոդվածի 1-ին կետ/: Առավել ևս, որ դատարանի վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ: Քննարկվող վճռի եզրափակիչ մասը՝ «վճռեց» բառից հետո ձևակերպված է հստակ, առանց վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների, ուստի վճիռը պարզաբանման ենթակա չէր: Այն ենթակա էր միմիայն կատարման:

3. Դատարանի որոշման թե՛ պատճառանկարագրական, և թե՛ եզրափակիչ մասերը հստակ են, միանշանակ ընկալելի և հասկանալի, հետևաբար չունեն պարզաբանման անհրաժեշտություն և կարիք: Դատարանը պարզաբանել է ոչ թե իր կողմից կայացված վճիռը, այլ մեկնաբանել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ կետը և Վանաձոր համայնքի ավագանու 2003թ-ի հոկտեմբերի 21-ին թիվ 176 «Տեղական տուրքերի և վճարների» մասին որոշումը, ինչը չի մտնում դատարանի իրավասության մեջ: Դատարանը, մեկնաբանելով նշված ակտերը, կայացրել է ըստ էության լրացուցիչ վճիռ, ինչը չէր կարող անել՝ վճռի օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքից ելնելով: Դատարանը դուրս է եկել վճռի բովանդակությունից՝ խախտելով ՀՀ Քաղ. դատ. օր-ի 143 հոդվածով սահմանված կանոնները:

Վերոնշյալ դատավարական և նյութական իրավունքի խախտումների կատարման հիմքով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ Քաղաքա-

ցիական գործերով Վերաքննիչ դատարան՝ Վանաձորի քաղաքապետարանի կողմից ներկայացված վճիռը պարզաբանելու մասին դիմումը մերժելու խնդրանքով: ՀՀ Քաղաքացիական գործերով Վերաքննիչ դատարանը գտնելով, որ Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ Քաղ. դատ. օր-ի 143 հոդվածով սահմանված կանոնները, որոշում կայացրեց վճիռը պարզաբանելու մասին դիմումը մերժել: Սակայն Վանաձորի քաղաքապետարանը տվյալ դեպքում դատարանի որոշմամբ չբավարարվեց և վճռաբեկ բողոք ներկայացրեց ՀՀ Քաղաքացիական և տնտեսական գործերով Վճռաբեկ դատարան:

Տվյալ դեպքում դատարանը թույլ է տվել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, այսինքն՝ դատարանը գործը չի քննել ողջամիտ ժամկետում:

2004-2005թթ. ընթացքում ջրամատակարար կազմակերպության կողմից շարունակվել են դատական հայցերն ընդդեմ բաժանորդների: Նկատենք, որ դրանք կրել են զանգվածային բնույթ: Հատկանշական է, որ դատարանը «Լոռու-Ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերության հայցերը մեծ մասամբ բավարարում էր առանց լուրջ քննություն կատարելու: Ջրամատակարար կազմակերպությունը հայց է ներկայացնում դատարան սեփական հաշվարկներով՝ առանց այլ փաստաթղթային ուսումնասիրություն կատարելու:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ քաղաքացիները դատարանից ստանում են ծանուցագրեր, սակայն չեն ներկայանում դատարան իրենց խնդիրը իրենց մասնակցությամբ քննելու համար: Եվ դատարանը հայցը քննում է առանց պատասխանողի մասնակցության:

Արդյունքում ջրամատակարար կազմակերպության հայցը ամբողջությամբ բավարարվում է:

Վանաձոր քաղաքի տասնյակ բնակիչներ չստացված աշխատավարձի հայցապահանջով դիմել են Լոռու մարզի առաջին ատյանի դատարան՝ ընդդեմ «Պրոմեթեյ-Քիմպրոմ» ՓԲ ընկերության: Դատարանը նրանց հայցապահանջները ամբողջովին բավարարել է և «Պրոմեթեյ-Քիմպրոմ» ՓԲ ընկերությանը պարտավորեցրել վճարել չստացված աշխատավարձի գումարները: ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության Վանաձորի բաժինը չի կատարում դատարանի վճիռները, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ օրենսդրությամբ չվճարված աշխատավարձի վճարման պարտադրման վերաբերյալ վճիռները ենթակա են անհապաղ կատարման: Տվյալ իրավիճակում նույնպես խախտվել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը, քանի որ դատարանի վճիռների չկատարման փաստը նույնպես արդար դատաքննության իրավունքի խախտում է:

2005թ-ին կառուցվել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի նոր շենքը, որը կառուցվածքային տեսակետից համապատասխանում է Եվրոպական չափանիշներին: Դատարանը ունի մեկ մեծ դահլիճ, երկու միջին չափերի և մեկ փոքր դահլիճներ: Ի տարբերություն անցած տարիների, դատական նիստերն անց են կացվում միայն դահլիճներում: ՀՀ դատավարական օրենսդրության համաձայն, բոլոր դատական նիստերը ձայնագրվում են:

Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան և Տաշիր քաղաքների նստավայրերում դատաքննությունը կատարվում է օրենսդրության խախտմամբ, այսինքն՝ առանց ձայնագրման: Տվյալ հանգամանքը դատավորները բացատրում են պետության կողմից, ի դեմս ՀՀ Արդարադատության նախարարության, միջոցներ և համապատասխան սարքավորումների չտրամադրմամբ:

2004-2005թթ-ի ընթացքում Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը քրեական գործ քննելու ընթացքում արդարացման դատավճիռ չի կայացրել՝ բացառությամբ մեկ դեպքի:

Դատարանները վարչական գործեր քննելիս մեծ մասամբ վճիռները կայացնում են պետական մարմինների օգտին:

Նկարը՝ Ա. Օհանյանի

Ազատ տեղաշարժման իրավունք

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից մոնիթորինգ է իրականացվել նաև քաղաքացիների ազատ տեղաշարժի, հանրահավաքների և երթերի անցկացման իրավունքների խախտումների բացահայտման ուղղությամբ: Մասնավորապես՝ 2004թ. մարտ-ապրիլ ամիսներին Վանաձորի և Լոռու մարզի այլ քաղաքների բնակիչների ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակման փաստերը, ընդդիմության ներկայացուցիչների նկատմամբ դատարանի որոշմամբ անօրինական վարչական կալանքների կիրառման դեպքերը ներկայացվել են Human Rights Watch կազմակերպության կողմից հրապարակված զեկույցում /http://hrw.org/backgrounder/eca/armenia/0504/armenia-election.pdf/

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ուշադրության կենտրոնում է գտնվել զինծառայողների իրավունքների պաշտպանությունը:

Օրինակ, զինծառայողներ Արայիկ Զալյանը, Ռազմիկ Սարգսյանը և Մուսա Սերոբյանը ձերբակալվել են 2004թ-ի ապրիլից՝ ԼՂՀ ՊԲ (պաշտպանության բանակի) թիվ 33651 զորամասի չորրորդ գումարտակի ժամկետային ծառայողներ Ռոման Եղիազարյանի և Հովսեփ Մկրտումյանի սպանության մեջ մեղադրվելու հիմքով: Գործի վերաբերյալ ուսումնասիրությունները վկայում են, որ սպանության մեղադրանքով ձերբակալված անձանց նկատմամբ ՀՀ Զինդատախազության քննիչների կողմից կիրառվել են խոշտանգումներ՝ բռնությունների, ծեծի և հոգեբանական ճնշումների ձևով: Հերթական անգամ ՀՀ Զինվորական դատախազության կողմից անօրինական մեթոդներ և միջոցներ են կիրառվել ցուցմունքներ կորզելու նպատակով: Արդյունքում սպանության մեջ մեղադրվում

Զինծառայողների իրավունքների պաշտպանություն

են անմեղ մարդիկ: Սա այլ կերպ, քան «գործը պարտակել» հնարավոր չէ անվանել: Նման որակման համար հիմք է հանդիսանում քրեական գործի նյութերում առկա ԼՂՀ Պաշտպանության բանակի նախարարի՝ ՀՀ Զինվորական դատախազ Գագիկ Զհանգիրյանին ուղղված միջնորդագիրը, որով վերջինս խնդրում է քրեական գործ չհարուցել զորամասի հրամանատար Իվան Գրիգորյանի նկատմամբ՝ հաշվի առնելով նրա՝ ազգային հերոս լինելու հանգամանքը: Միայնակ մնալով դատախա-

զական ամբողջ համակարգի դեմ, չտեսնելով իր իրավունքների պաշտպանության որևէ հնարավորություն՝ Արայիկ Զալյանը որպես ծայրահեղ միջոց ընտրել է հացադուլը: Երկու ամիս շարունակվող հացադուլի հետևանքով նա հյուծվել ու ուժասպառ էր եղել: Հացադուլը շարունակելու դեպքում լուրջ վտանգ էր սպառնում նրա կյանքին: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը կազմակերպել է ստորագրահավաք՝ /500 նամակ/ պահանջելով ՀՀ Զինդատախազությունից վերսկսել Արայիկ Զալյանի մասով նոր նախաքննություն՝ ապահովելով անմեղության կանխավարկածի սկզբունքն ապահովող իրավական մեխանիզմներ: Միաժամանակ հայտարարվել է, որ Արայիկ Զալյանի առողջության հետագա վատթարացման և կյանքին սպառնացող հանգամանքների ողջ պատասխանատվությունը կրելու է ՀՀ Զինվորական դատախազությունը:

Արայիկ Զալյան

Ռազմիկ Սարգսյան

Մուսա Սերոբյան

Արայիկ Զալյանի և նրա հետ ձերբակալվածների իրավունքների պաշտպանության ընթացքում ներգրավված են եղել տեղական և հանրապետական լրատվամիջոցներ, որոնք լուսաբանել են գործի ընթացքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը աջակցել է Արայիկ Զալյանի ընտանիքին՝ գործում փաստաբան ընդգրկելով:

2004 թ-ի մայիսի 20-ին կազմակերպություն է դիմել Լ.Յ-ն՝ իր որդու՝ Կ.Յ-ի իրավունքների պաշտպանության խնդրանքով: Խնդիրն այն է, որ Կ.Յ-ն 1985 թ-ից տառապում է հոգեկան հիվանդությամբ, սննդային ալերգիկ ռեակցիաներով: Զինկոմիսարիատը նրան ենթարկել է բժշկական հետազոտության և զորակոչման որոշում է կայացրել, ինչի կապակցությամբ 2004թ-ի մայիսի 26-ին Վանաձորի տարածքային զինկոմիսարիատից Կ.Յ-ն ծանուցագիր է ստացել: 2004 թ-ի մայիսի 24-ին կազմակերպությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ Կ.Յ-ին լրացուցիչ բժշկական հետազոտություն անցկացնելու նպատակով: Արդյունքում Կ.Յ-ի նկատմամբ նշանակվել է լրացուցիչ բժշկական փորձաքննություն, որի արդյունքում պարզվել է, որ նա իրականում տառապում է հոգեկան հիվանդությամբ: 2004 թ-ի հունիսի 16-ին ՀՀ պաշտպանության նախարարի ավագ օգնական-վարչական ապարատի ղեկավար Ա. Մելքոնյանը, ի պատասխան կազմակերպության 24.05.2004թ-ի գրության, հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ զինակոչիկ Կ.Յ-ն, հետազոտվել է Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում, ենթարկվել փորձաքննության պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովում: Նրա մոտ ախտորոշվել է չափավոր արտահայտված նևրոսթենիա հիվանդություն: ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանի համաձայն Կ.Յ-ն երեք տարի ժամկետով ազատվել է զորակոչից:

Նկարը՝ Ա. Օհանյանի

Նկարը՝ Ա. Օհանյանի

Սոցիալական իրավունք

Աղքատության նպաստ եւ կենսաթոշակ ստանալու իրավունք

Վանաձորի «ՎանՇիկ» կոմբինատի 18 աշխատողներ դիմելով ՀՔԱ Վանաձորի գրասենյակ՝ հայտնել են, որ1957թ-ից աշխատել են նշված կազմակերպությունում: Աշխատանքի ժամանակ վնասվածք ստանալու պատճառով 1985թ-ից թոշակավորվել են: Թոշակը կազմում է ամսական 1000 դրամ: 2004թ. դեկտեմբերին ընկերությունը լուծարվել է: Աշխատողներին 2004թ. նոյեմբերից չեն վճարել իրենց հասանելիք ամենամսյա 1000 դրամը: Թոշակառուները փաստորեն չեն ստացել իրենց թոշակները:

2002թ-ի հունվարի 29-ից մինչև 2003թ ապրիլի 16-ին Վանաձոր քաղաք բնակիչ Արարատ Սահակյանը գտնվել է Սևանի Հանրապետական հոգեբուժական հիվանդանոցում: Քաղաքացին դիմել է ՀՀ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ՝ կենսաթոշակի վճարման խնդրանքով: Հիմնադրամը քաղաքացու դիմումը ուղարկել է Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Վանաձորի տարածքային կենտրոն, որտեղից ստացված 03.12.2004թ. պատասխան գրությամբ հայտնել են, որ կենսաթոշակի վճարումը կասեցվում է կենսաթոշակառուի կողմից վեց ամիս անընդմեջ անձամբ կենսաթոշակ չստանալու համար:

Վանաձոր քաղաքի բնակիչ Պարույր Եղիկյանը 1960-1985թթ. աշխատել է վնասակար պայմաններում: Դիմել է պարտադիր սոցիալական ապահովագրության հիմնադրամ՝ վաղաժամ թոշակի անցնելու խնդրանքով, սակայն նրան մերժել են՝ պատճառաբանելով, որ տարիքն ու ստաժը չեն համապատասխանում թոշակավորվելու պայմաններին: Սակայն նրա փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա աշխատանքային ստաժը և աշխատած պայմանները բավարար են վաղաժամ կենսաթոշակի անցնելու համար:

Նկարը՝ Ա. Օհանյանի

Բնակարանային իրավունք

Նազիկ Աղեկյանը փախստական է: Հայաստան է տեղահանվել Ադրբեջանի Շահումյան գյուղից: Լոռու մարզպետարանում գրանցվել է բնակարանների կարիքավորների հերթացուցակում, բայց վերագրանցման ժամանակ նրան դուրս են թողել բնակարանի հերթացուցակից: Դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր փախստականների հարցերով զբաղվող գերատեսչություն: Ստացված պատասխան-գրությամբ նրան հայտնել են, որ որպես բնակարանների կարիքավոր պետք է հերթագրվի բնակության վայրի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունում: Ինչ վերաբերում է հանրակացարանային սենյակ տրամադրելուն կամ աշխատանքի տեղավորելուն, ապա այդ հարցով անհրաժեշտ էր դիմել տեղական իշխանություններին: Փաստորեն, Նազիկ Աղեկյանը փախստական լինելով հանդերձ զրկված էր բնակարան ունենալու իրավունքից:

2004-2005թթ ընթացքում տնակային ավանի բնակիչների խնդիրները չեն լուծվել: Ժամանակավոր տնակի բնակիչներին Վանաձորի քաղաքապետարանը ծանուցումներ է ուղարկում տնակները ազատելու և քանդելու վերաբերյալ: Պահանջը չկատարելու դեպքում տնակաբնակներին քաղաքապետարանը սպառնում է դատարանով: Վանաձորի քաղաքապետարանը բնակիչներին որպես փոխհատուցում առաջարկում է հանրակացարանային պայմաններ կամ բնակարանի վարձակալության վճար երկու տարի ժամանակով, յուրաքանչյուր ամսվա համար հատկացնելով 10.000 դրամ վարձակալության գումար:

Նկարը՝ Ա. Օհանյանի

Տեղեկատվություն ստանալու իրավունք

2004թ. կազմակերպությունը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ կատարեց «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի կիրառման մոնիթորինգ: Նպատակն էր՝ ուսումնասիրել օրենքի կիրառելիության վիճակը Լոռու մարզի բնակավայրերում: Մոնիթորինգը իրականացվել է իրավախորհրդատվության տրամադրման, տեղեկություններ ձեռք բերելու նպատակով քաղաքացիների համար հարցման թերթիկների կազմման և տարբեր ատյաններ ուղարկման միջոցով: Այդ կերպ ուսումնասիրվել է, թե որքանով է պաշտպանված քաղաքացիների տեղեկատվության ազատության իրավունքը Լոռու մարզի բնակավայրերում: Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպություն են դիմել 97 քաղաքացի, որոնց համար պատրաստվել է 111 հարցում: Քաղաքացիների բոլոր հարցումներին պատասխանել են օրենքի սահմաններում:

«Տեղեկատվության ազատության կենտրոնի» կողմից կազմակերպված մրցույթի արդյունքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2004թ. ճանաչվել է «Տեղեկություն ստանալու իրավունքը ամենաակտիվն ու լավագույնս կիրառած հասարակական կազմակերպություն»:

2005թ-ի ընթացքում կազմակերպությունը կրկին համագործակցելով «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» հետ՝ օգնել է քաղաքացիներին հարցում անել տարբեր գերատեսչություններ, հետամուտ եղել օրենքով նախատեսված ժամկետներում պատասխանի ստացմանը: 2005թ-ի մայիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել 56 քաղաքացի, որոնց համար պատրաստվել է 93 հարցում: Իր հերթին կազմակերպությունը 23 հարցում է հղել պետական տարբեր մարմիններ, իսկ Վանաձորում լույս տեսնող «Քաղաքացիական նախաձեռնություն» շաբաթաթերթը բազմաթիվ անգամ անդրադարձել է տեղեկատվության ազատության խնդիրներին:

Տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքը չկատարելու առումով առաջին շարքում գտնվում է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի ստորաբաժանումը: Անցած յոթ ամիսներին տարբեր գերատեսչություններ ուղարկված 131 հարցումներից այս կառույց է ուղարկվել 19 հարցում: Կադաստրը տեղեկատվություն է տրամադրել է դրանցից 12-ին: Կադաստրը մերժել է տեղեկատվություն տրամադրել 2 քաղաքացու՝ պատճառաբանելով, որ պահանջվող տեղեկատվությունը չի համապատասխանում օրենսդրության պահանջներին: Չնայած այն հանգամանքին, որ քաղաքացիները կատարել էին պահանջվող վճարումները, այս կառույցը ընդհանրապես չի պատասխանել մի քաղաքացու կրկնակի հարցմանը, իսկ երեքի դեպքում ընթացք չի տվել՝ համապատասխան վճարումների բացակայության պատճառով: Փաստորեն, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանումը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված գրավոր հարցումներին պատասխանելու 5-օրյա ժամկետը պահպանել է 19-ից 7 դեպքում, իսկ ըստ էության պատասխանել է ձգձգումներից հետո:

Քաղաքացիների՝ տեղեկություններ ստանալու հարցում երկրորդ թերացող կառույցը Վանաձորի քաղաքապետարանն է: Այս կառույց է ուղարկվել 11 հարցում: Վերջինս միայն մեկ դեպքում է քաղաքացուն տվել ոչ էական պատասխան՝ 5-օրյա ժամկետը պահպանելով 11-ից 4-ի դեպքում:

Հարցումներից 5-ը ուղարկվել են «ԱրմենՏել» համատեղ ձեռնարկություն ՓԲԸ-ին, որը պահանջվող տեղեկատվությունը տրամադրել է

4-ից միայն 3 դեպքում՝ պահպանելով օրենքով սահմանված ժամկետը:

4-ական հարցումներ են ուղարկվել Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ (ՎՊՄԻ), Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի (ՍԱՊՀ) Վանաձորի տարածքային կենտրոն, Վանաձորի տարածքային զինկոմիսարիատ և ՀՀ Վերաքննիչ դատարան:

ՎՊՄԻ-ն բոլոր դեպքերում տրամադրել է պահանջվող տեղեկությունները՝ միայն 2 դեպքում պահպանելով 5-օրյա ժամկետը, ՍԱՊՀ Վանաձորի տարածքային կենտրոնը՝ միայն 1 դեպքում է պատասխանել ժամանակին, իսկ Վանաձորի տարածքային զինկոմիսարիատը՝ 2 դեպքերում: Ի տարբերություն վերը նշված կառույցների՝ ՀՀ Վերաքննիչ դատարանը իրեն ուղղված 4 հարցումներից ոչ մեկի դեպքում չի պահպանել 5-օրյա ժամկետը, իսկ քաղաքացիներից մեկին անհրաժեշտ տեղեկությունները տրամադրել է կրկնակի դիմելուց հետո միայն՝ 1ամիս 23 օր անց:

3-ական հարցումներ են ուղարկվել Լոռու մարզպետարան, Սոցիալական ծառայության Վանաձորի գործակալություն, ՀՀ քաղաքաշինության պետական տեսչության Լոռու տարածքային բաժին, ՀՀՀ մարզային կենտրոն և Վանաձորի նոտարական գրասենյակ:

ՀՀ քաղաքաշինության պետական տեսչության Լոռու տարածքային բաժինը և ՀՀՀ մարզային կենտրոնը բոլոր դեպքերում պահպանել են օրենքով սահմանված 30-օրյա ժամկետը, քանի որ այդ կառույցներին դիմած քաղաքացիները ուսումնասիրություն պահանջող տեղեկատվություն էին խնդրել: Սոցիալական ծառայության Վանաձորի գործակալությունը 3-ից միայն 1 դեպքում է պահպանել 5-օրյա ժամկետը, Վանաձորի նոտարական գրասենյակը՝ 2 դեպքում: Լոռու մարզպետարանը, թեև բոլոր դեպքերում տրամադրել է պահանջվող տեղեկությունները, բայց ոչ մի դեպքում չի պահպանել օրենքով սահմանված ժամկետը:

2-ական հարցումներ են ուղարկվել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Լոռու մարզի դատախազություն, Լոռու արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության վարչություն, Վանաձորի թիվ 3 քաղամասային հիմնարկություն, Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր, «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ, ինչպես նաև Օձունի, Կուրթանի և Մեծավանի գյուղապետարաններ: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները անպատասխան են թողել իրենց դիմած քաղաքացիների մեկական հարցումներ: Մյուս կառույցներից օրենքով սահմանված ժամկետները պահպանել են Լոռու արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության վարչությունը, Լոռու մարզի դատախազությունը և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն:

Քաղաքացիները դիմել են նաև ՀՀ Պաշտպանության Նախարարություն, ՀՀ Առևտրի և տնտեսական հարցերի նախարարություն, ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ Վճռաբեկ դատարան, ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ, ՀՀ զինվորական կոմիսարին, ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Վանաձորի թիվ 30 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, Գուգարքի տարածաշրջանային մաքսատուն, Վանաձորի զբաղվածության տարածքային կենտրոն, ՀՀ աշխատանքի պետական տեսչության Լոռու տարածքային հարկային տեսչություն, Լոռու մարզի առաջին ատյանի դատարան, ՀՀ ազգային արխիվի Լոռու մարզային մասնաճյուղ, ՔԿԱ Վանաձորի տարածքային բաժին, «Վանսեյսմշին» ՍՊԸ, Վանաձորի թիվ 26, թիվ 27 միջն. դպրոցներ, Վանաձորի ԲՇՄ, Վանաձորի թիվ 9 թաղամասային հիմնարկություն, Ալավերդու «ACP» ՓԲԸ և այլ կառույցների:

Այլ իրավունքի խախտումներ

Վանաձորի քաղաքապետարանը կազմակերպում է հողամասերի աճուրդային վաճառք: Մինչ աճուրդի իրականացումը և հողատարածքը վաճառելը Վանաձորի քաղաքապետարանը խախտում է մարդկանց իրավունքները: Մասնավորապես՝ հողատարածքում տեղադրված տնակներն առանց ապամոնտաժելու կամ տեղափոխելու վաճառում է հողատարածքը: Տվյալ դեպքում ինքնակառավարման մարմնի ապօրինի գործողության հետևանքով միանգամից խախտվում է երկու սուբյեկտի տարբեր իրավունքներ: Նախ, գնորդից վաճառվող տարածքի դիմաց գանձվում է գումար: Հետագայում աճուրդը անվավեր ճանաչելուց հետո գումարի վերադարձման ժամանակ գնորդը հանդիպում է խոչընդոտների: Իսկ հողը փաստացի զբաղեցնող անձի դեպքում խախտվում է նրա բնակության իրավունքը, քանի որ առանց վերաբնակեցման նրան զրկում են բնակության փաստացի տարածքից:

Մեկ այլ իրավիճակում Վանաձորի քաղաքապետարանը քաղաքացուն տրամադրում է շինարարության կամ քանդման թույլտվություն, որի իրականացման պայմաններում խախտվում է մեկ ուրիշ մարդու սեփականության իրավունքը: Օրինակ, Կ.Ա-ին հատկացրել է բնակարան կառուցելու թույլտվություն, սակայն շինարարության իրականացման ընթացքում կրճատվում կամ ընդհանրապես դադարեցվում է մեկ այլ քաղաքացու՝ Ս.Մ-ին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի լուսավորությունը կամ սեյսմակայունությունը խաթարվում է շինարարության հողային աշխատանքներն իրականացնելու ընթացքում:

Մեկ այլ իրավիճակում սուբյեկտը կատարում է շինարարական աշխատանքներ, ասենք կառուցում է սրճարան: Վանաձոր քաղաքի բնակիչ Ալեքսանդր Կարգանովին պատկանող բնակարանի պատուհանի տակ կառուցվում է երրորդ սրճարանը, նրան խանգարում է սրճարանի երաժշտությունը, ծխախոտի ծուխը: Քաղաքացին դիմել է Վանաձոր քաղաքի, ինչպես նաև Լոռու մարզի պատկան մարմինների: Պետական և տեղական մարմինները նրան պատասխանում են, որ բոլոր գործողությունները կատարվում են օրենքների շրջանակներում: Սակայն կոնկրետ իրավիճակում կատարվող շինարարական աշխատանքները խախտում են քաղաքացու հանգստի իրավունքը:

Վանաձոր քաղաքի բնակիչ Գուրգեն Սուքիասյանը հայտնել է, որ իր բնակարանի հարևանությամբ կառուցվել է շինություն՝ ավտոտնակ, որը չունի համապատասխան շինարարության թույլտվություն, հետևաբար համարվում է ապօրինի շինություն: Նա դիմել է Վանաձորի քաղաքապետարան, սակայն քաղաքապետարանը միջոց չի ձեռնարկել ավտոտնակը քանդելու ուղղությամբ: